



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ¹ 11

ԵՂԶ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏՄՈՐՀՐԴԻ՝

2016 Թ. ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Բակալավրիատի հեռակա ուսուցման պետական քննական հանձնաժողովի նախագահի հաշվետվության քննարկում:
2. 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի արդյունքների քննարկում:
3. Կուրսերի կուրատորների տարեկան հաշվետվությունը (գրավոր, բոլորի ներկայությունը պարտադիր է):
4. 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակի սոցիալաբանության թերթիկներում արված գրությունների մասին:
5. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքի սկզբում նա տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 29 անդամներից այս պահին նիստին մասնակցում են 21-ը, ապահովված է անհրաժեշտ քվորումը: Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի 11-րդ նիստի օրակարգը:

1-ին հարցի առիթով լսվեց պետական քննական հանձնաժողովների նախագահի՝ Բ. Գ. Գայանե Գևորգյանի հաշվետվությունը (կից ներկայացվում է):

Մասնավորապես նկատվեց, որ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ ամփոփիչ ավարտական քննությունների, բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններն անցել են բնականոն ընթացքով, և արդյունքները գոհացուցիչ են:

2015-2016 ուստարում «Հայ գրականություն» առարկայից ամփոփիչ ավարտական քննություն է հանձնել հեռակա ուսուցման բաժնի 20 ուսանող:

Արդյունքներն են՝ գերազանց – չկա, լավ – 5 ուսանող, բավարար – 7 ուսանող, անբավարար – 8 ուսանող:

Ավարտական աշխատանք է պաշտպանել 13 ուսանող:

Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝

գերազանց – չկա

լավ – 5 ուսանող

բավարար - 6 ուսանող

անբավարար – 2 ուսանող

2015-2016 ուստարում «Հայոց լեզու» առարկայից ամփոփիչ ավարտական քննություն է հանձնել հեռակա ուսուցման բաժնի 20 ուսանող: Արդյունքները հետևյալն են՝

գերազանց- չկա

լավ – չկա

բավարար - 20 ուսանող

Ավարտական աշխատանք է պաշտպանել 18 ուսանող, որից 15-ը՝ ժամանակակից հայոց լեզվից, 3-ը՝ լեզվաբանությունից:

Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝

հայոց լեզվի ամբիոն - 15 ուսանող

գերազանց -1 ուսանող

լավ – 11 ուսանող

բավարար – 3 ուսանող

լեզվաբանության ամբիոն – 3 ուսանող

լավ – 1 ուսանող

բավարար – 2 ուսանող

Ամփոփիչ քննությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ ուսանողները ունեին մասնագիտական բավարար գիտելիքներ, աչքի էին ընկնում նյութի բազմակողմանի և խոր իմացությամբ. նրանց խոսքը տրամաբանված էր, դատողությունները՝ համոզիչ: Սակավաթիվ ուսանողների մոտ նկատելի էին մտքերը հստակ ձևակերպելու որոշակի դժվարություններ: Ի տարբերություն առկա ուսուցման բաժնի ուսանողների՝ հեռակա ուսուցման բաժնի ուսանողների ամփոփիչ ատեստավորման բանավոր քննության արդյունքներում գերակշռում է գնահատականների ցածր շեմը:

Քննական տոմսերում առկա բոլոր հարցերն ունեին հստակ ձևակերպումներ, կազմված էին ճիշտ համամասնությամբ: Բացի տեսական հարցերից՝ տոմսերում կար նաև գործնական առաջադրանք, որը հնարավորություն էր տալիս ուսանողներին իրենց տեսական պատասխանը ամրապնդել գործնական առաջադրանքով:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունը ևս անցել է գործող քննակարգին համապատասխան: Ավարտական աշխատանքների թեմաները արդիական էին, բազմազան, ունեին անհրաժեշտ գիտագործնական ուղղվածություն, գիտական և ճանաչողական որոշակի արժեք: Կային նաև զուգադրական բնույթի աշխատանքներ: Ինչպես բովանդակությամբ, այնպես էլ կառուցվածքային ու կատարողական առումով ավարտական աշխատանքները համապատասխանում էին նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Դրանցում հստակ նշված էին նպատակը, խնդիրները և ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ուսումնասիրված էր համապատասխան գրականություն, և ներկայացված էին հետազոտության գործնական արդյունքները:

Ուսանողները կարողացան խոսքի տրամաբանական կառուցվածքով, լեզվական իրազեկություններով, թեմայի և աշխատանքի վերաբերյալ հարցերին տրվող պատասխանների և պարզաբանումների, բանավիճելու և փաստարկներ բերելու կարողություններով արժանանալ համապատասխան գնահատականների: Այնուհանդերձ, կային նաև սակավաթիվ աշխատանքներ, որոնցում մասնակիորեն էր կատարված թեմային առնչվող գրականության վերլուծություն, հիմնավորված չէին սեփական մոտեցումները ուսումնասիր-

վող խնդրի վերաբերյալ, թեմաների ձևակերպումները երբեմն շատ ավելի ընդհանրական բնույթ էին կրում, քան դրանցում կատարված աշխատանքն էր:

Ընդհանուր առմամբ մագիստրատուրայի շրջանավարտների գիտելիքները ավելի բարձր էին: Նրանք տիրապետում էին մագիստրոսական աշխատանքների նյութին, մասնագիտական գիտելիքները համապատասխանում էին պահանջվող մակարդակին, իսկ որոշ ուսանողներ աչքի ընկան նյութի խոր իմացությամբ՝ զգալիորեն գերազանցելով պահանջվող մակարդակը: Հարկ է նշել նաև, որ մագիստրոսական աշխատանքների թեմաներն առավելապես արդիական էին, անդրադառնում էին հայագիտության մեջ վիճահարույց խնդիրների. այդ իրողությունն էլ առավել հետաքրքիր դարձրեց մագիստրոսական աշխատանքների պաշտպանությունը՝ երբեմն վերածելով այն բանավեճի: Աշխատանքների գերակշիռ մասը կառուցված էր նյութի տեսական մասի և գործնական հետազոտությունների համադրմամբ, դրանց մի մասում առկա էին փորձարարական հստակ տվյալներ և այդ տվյալներից ելնելով՝ կատարված էին անհրաժեշտ եզրակացություններ:

Ուսանողների պատրաստվածության բարձր մակարդակը, մասնագիտական իրազեկությունը, հետազոտական մեթոդների կիրառումը, փաստական նյութը դասակարգելու, վերլուծելու, գնահատելու կարողությունը վկայում են ուսանողների հետ համապատասխան ամբիոնների կատարած հանգամանալից և երկարատև աշխատանքի մասին: Ամբիոնները մեծ ջանք էին գործադրել ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների ընտրության և դրանց իրականացման գործում, քանի որ նկատելի էին գիտական խնդիրների, դրանց լուծումների հստակ շարադրում և կիրառում արդի գիտակարգերում: Հատկապես ցանկանում ենք նշել ավարտական և մագիստրոսական աշխատանքների ձևակերպման որակը. դրանք կազմված էին գիտական գրագրության կանոններին համապատասխան: Ընդհանուր առմամբ ցանկանում ենք փաստել, որ համապատասխան ամբիոնների դասախոսները լավագույնս են իրականացրել իրենց պարտականությունները, այն է՝ թեզերի ղեկավարման և գրախոսման աշխատանքները. գրախոսությունները գրված էին ըստ էության, և արդարացիորեն վեր էին հանված վրիպակներն ու թերությունները, կատարված էին ուսանելի դիտողություններ և առաջարկություններ, որոնք օգնում էին

հանձնաժողովին աշխատանքը գնահատել ոչ միայն փաստացի թեզի և դրա ներկայացման հիման վրա, այլև գրախոսների կարծիքները նկատի ունենալով:

Հատկապես ցանկանում ենք շեշտել ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի /վարիչ Յ. Ավետիսյան/ կատարած հսկայածավալ աշխատանքը /ավարտական և մագիստրոսական աշխատանքների մեծ մասի /մոտ 70/ թեմաները առաջադրված էին այդ ամբիոնի կողմից/: Չնայած աշխատանքների մեծ քանակին՝ ամբիոնի կողմից առաջարկված թեմաներն աչքի էին ընկնում թե՛ արդիականությամբ և՛ թե՛ բազմազանությամբ. առաջադրված էին անգամ հայ լեզվաբանության մեջ չուսումնասիրված թեմաներ, և մագիստրոսներն ու բակալավրիատի ուսանողները հիմնավորված ներկայացնում էին իրենց ուսումնասիրությունները: Հարկ է շեշտել նաև այդ մեծաքանակ աշխատանքների՝ գիտական գրագրությանը համապատասխան ձևակերպված լինելը: Սա փաստում է այն մասին, որ ժամանակակից հայոց լեզվի ամբիոնը, որի վրա էր դրված ավարտական և մագիստրոսական աշխատանքների մեծ մասի պատասխանատվությունը, կատարել է հետևողական և ամենօրյա տքնազան աշխատանք: Ամբիոնում իրականացվել է մագիստրոսական և ավարտական մոտ 70 աշխատանքների քննարկում, որի արդյունքում ապահովվել է դրանց գիտական պատշաճ մակարդակը:

Վերոգրյալը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է այսուհետև ևս ավարտական և մագիստրոսական աշխատանքների համար այնպիսի թեմաներ առաջադրել, որոնք արդիական են և բխում են հայերենագիտության առկա հիմնախնդիրներից: Թեմաներ առաջադրելիս հարկ է առավել մեծ ուշադրություն դարձնել զուգադրական բնույթի աշխատանքներին՝ կարևորելով ուսանողների ինքնուրույն վերլուծական կարողություններն ու գործնական հմտությունները դրսևորելու փաստը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ավարտական աշխատանքների թեմաների ձևակերպումները երբեմն ընդհանրական բնույթ էին կրում և թեկնածուական կամ դոկտորական աշխատանքների վերնագրեր էին հիշեցնում, երբեմն նկատվում էր ավարտական աշխատանքի վերնագրի և բովանդակության անհամապատասխանություն, կարծում ենք, անհրաժեշտ է ավարտական աշխատանքների թեմաները քննարկել ամբիոնների նիստերում թեմաների հետ կապված թյուրըմբռնումներից խուսափելու համար:

Անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել մագիստրոսական թեզերի և բակալավրիատի ավարտական աշխատանքների կատարման որակին՝ կարևորելով դրանցում փաստական նյութի վերլուծությունը, դասակարգումը և զուգադրումը, փաստարկված դատողությունների ու եզրահանգումների առկայությունը, առկա հիմնախնդիրների լուծման ասպարեզում ժամանակակից մեթոդաբանության կիրառումը: Հարկ է մեծացնել նախնական խորհրդատվությունների քանակը ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների համար, հստակեցնել աշխատանքի կատարման ընթացքի վերահսկողության մեխանիզմները, մշտադիտարկումների ժամանակ քննարկել ներկայացված թեզի կատարման ծավալը և մակարդակը՝ շեշտադրելով խնդրահարույց հարցերը, մեծացնել դասախոսների պատասխանատվությունը թեզերի հետ կապված աշխատանքների նկատմամբ, կիսամյակային հաշվետվությունների ժամանակ չբավարարվել ուսանողի կողմից ներկայացվող և ղեկավար դասախոսի կողմից հաստատվող հաշվետվային փաստաթղթով, այլ պահանջել թեզի համապատասխան բաժինների էլեկտրոնային տարբերակները:

Կարևոր ենք համարում նշել, որ, ինչպես նախորդ, այնպես էլ 2015-16 ուստարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացը ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում կազմակերպված էր պատշաճ մակարդակով, պահպանված էին ընթացակարգային բոլոր պահանջները: Հատկապես ցանկանում ենք բարձր գնահատել բանասիրական ֆակուլտետի ղեկան Ա. Ավագյանի կատարած մեծ աշխատանքը, որի արդյունքում պետական քննական հանձնաժողովի աշխատանքները ընթացել են ղեկանատի կողմից սահմանված ժամանակացույցի համապատասխան, քննական կարգի խախտումներ չեն եղել, և ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովն աշխատել է գործնական և փոխադարձ վստահության մթնոլորտում:

Օրակարգի **2-րդ հարցը** նվիրված էր 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի արդյունքների քննարկմանը:

Իր ելույթում ղեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը, հիմնականում բավարար համարելով քննությունների արդյունքները, հայտնեց որոշ մտահոգություններ: Նա մասնավորապես նկատեց, որ, օրինակ, բանասիրական ֆակուլտետի առկա 1-ին կուրսի 128 ուսանո-

դից անբավարար է ստացել 42-ը՝ հիմնականում «Հայ ժողովրդի պատմություն» առարկայից, ինչը խիստ մտահոգիչ է, միայն գերազանց՝ 9-ը, միայն գերազանց և լավ՝ 24-ը, խառը՝ 53-ը: Իսկ առկա 2-րդ կուրսի 116 ուսանողից անբավարար է ստացել 27-ը, որից 12-ը՝ միայն «Բարբառագիտություն» առարկայից... Մյուս ելույթ ունեցողները ևս նկատեցին, որ անհրաժեշտ է պարզել միևնույն առարկաներից անբավարար գնահատականների գերակայության օբյեկտիվ պատճառները:

Օրակարգի **3-րդ հարցի՝** կուրսերի կուրատորների տարեկան հաշվետվության ժամանակ լսվեցին բոլոր կուրատորների ելույթները: Այդ առիթով ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը նշեց, որ կատարված աշխատանքները բավարար չեն, և շատ կուրատորներ թերանում են: Անհրաժեշտ է նոր ուսումնական տարում ամբիոնների կողմից ուժեղացնել վերահսկողությունը կուրատորների աշխատանքների նկատմամբ:

Օրակարգի **4-րդ հարցը** նվիրված էր 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակի սոցիալ-ցումների թերթիկներում արված գրություններին: Պրոֆ. Ա. Ավագյանը մասնավորապես նկատեց, որ անանուն գրություններում ուսանողները հիմնականում բողոքում են որոշ դասախոսների մարդկային կամ գիտական որակներից, գործնական պարապմունքների սակավությունից ու ձևական բնույթից, սանհանգույցների անմխիթար վիճակից: Նա խոստացավ նոր ուսումնական տարում հատուկ զբաղվել նշված թերությունների շտկմամբ:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ հայ նորագույն գրականության ամբիոնի ներկայացրած «Մաթևոսյանական ընթերցումներ» ժողովածուի 3-րդ գիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը, Վ. Սաֆարյանը և դոց. Ս. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջնորդել ԵՊՀ-ի հրատարակչական խորհրդին՝ հրատարակելու «Մաթևոսյանական ընթերցումներ» ժողովածուի 3-րդ գիրքը և կատարել տպաքանակի համապատասխան բաժանում՝ հայ բանասիրության ֆակուլտետին հատկացնելով 100 օրինակ:

բ/ **ԼՍԵՑԻՆ** – Անուշ Վահանի Հակոբյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Լ. Հովսեփյանը և Յու. Ավետիսյանը:

Նշվեց, որ ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ խնդիր է դրվում մշակել՝ 1) ուսումնասիրության լրացուցիչ ճշգրիտ մեթոդներ, որոնք նոր հնարավորություններ կբացահայտեն լեզվաբանական խնդիրները լուծելիս, 2) ռուսերենի լեզվական նյութի հիման վրա առաջարկել տեքստի լեզվաբանության ոլորտում խիստ անհրաժեշտ միասնական գործառական ստորակարգային (հիերարխիկ) մակարդակային համակարգ, որը կներթափանցի ողջ լեզվի մեջ՝ որպես համակարգի և հիմնված կլինի լեզվական դիզյունկտիվ, կոնյուկտիվ և իմպլիկատիվ միավորների և նրանցով սերված մակարդակների վրա:

Հեղինակը հրատարակել է ատենախոսության թեմային վերաբերող 33 աշխատանք, այդ թվում՝ 1(մեկ) մենագրություն և 9 (ինը) հրապարակում արտասահմանյան գիտական հանդեսներում :

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. «Կոնյունկտիվ, դիզյունկտիվ և իմպլիկատիվ լեզվական կառույցների կառուցվածքախմաստաբանական վերլուծություն (ռուսերենի լեզվական նյութի հիման վրա)»-ը հաստատել որպես Բ. Գ. Թ., դոց. Ա. Վ. Հակոբյանի դոկտորական ատենախոսության թեմա:

Վերջում գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց նիստի բոլոր մասնակիցներին, ցանկացավ ամառային արձակուրդի բարի անցկացում և նիստը հայտարարեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ